ՍԱԹԵՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկեր ամբիոն
ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

Ագրովերամշակող արդյունաբերությունը գյուղատնտեսության զարգացման շարժիչ ուժն է, երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը, որը շատ է կարևորվում գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման առումով:

Դեռևս խորհրդային տարիներին համակարգում գործում էին արտադրական մեծ հզորություններով ձեռնարկություններ, որոնց արտադրած կոնյակը, գինին, պահածոները և հյութերը բարձր պահանջարկ էին վայելում: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի հիմնական արտաքին ճանապարհների շրջափակման պատճառով ագրովերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները խիստ սահմանափակեցին իրենց գործունեությունը: Սակայն 1998 թվականից սկսած, մասնավոր հատվածի լրացուցիչ ներդրումների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, զգալիորեն բարելավվեց սննդի վերամշակող արդյունաբերության վիճակը: Մասնավորապես ՀՀ կառավարության գործուն միջամտությամբ 1999 թվականին պտուղբանջարեղեն վերամշակող 4 ընկերությունների՝ Արարատի, Արտաշատի, Արմավիրի պահածոների և Արմավիրի գինու գործարաններին շվեյցարական Անդրէ Գրուպ ընկերությունը տրամադրեց լոլիկի մածուկի և պտղախյուսի ասեպտիկ փաթեթավորման սարքավորումներ: Ծրագրի իրականացմանը նպաստեցին Լինսի հիմնադրամն ու ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագիրը: Իրականացվեց շուրջ 6 մլն ԱՄՆ դոլարի համատեղ վարկային ծրագիր: Այն երկրում առաջիններից էր վերամշակող ընկերությունների շարքում և աննախադեպ միջոցների մեծության առումով: Իրականացված միջոցառումների շնորհիվ այդ տարի մթերվեց ու վերամշակվեց շուրջ 40 հազար տոննա բանջարեղեն՝ նախորդ տարվա 4 հազար տոննայի դիմաց[1]:

Ծրագրի իրականացմամբ լուծվեց ոչ միայն լոլիկի, այլև ծիրանի, խնձորի ու դեղձի գնումների ու վերամշակման խնդիրը: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում նշված ընկերությունները կարողացան կարգավորել նաև արտահանման ու իրացման խնդիրները, ստեղծեցին սեփական շրջանառու միջոցներ՝ հումք գնելու համար: Հաջորդ տարիներին համանման սարքավորում ձեռք բերեցին նաև այլ ընկերություններ:

Խոշոր ներդրումներից կարելի է նշել նաև Պեռնո Ռիկար ընկերության ներդրած 30 մլն դոլարը կոնյակագործության ոլորտում, ֆրանսիական Կաստել ընկերության ներդրած 18 մլն դոլարը գարեջրի և հանքային ջրի արդյունաբերությունում, ավելի քան 10 մլն դոլարի ներդրումը հայ-կանադական Գրանդ-Տոբակո, հայ-ռուսական Գրանդ-Քենդի, հայ-հունական Մասիս-Տոբակ ու Կոկա-կոլա ընկերություններում: Խոշոր ներդրումների հաշվին նոր տեխնոլոգիաներ են ներդրվել և վերազինման աշխատանքներ կատարվել «Եվրոթերմ» ՓԲԸ-ում, «Թամարա ֆրութ» ՍՊԸ-ում, «Երևանի գինու, օղու, կոնյակի կոմբինատ», «Գրեյթ Վելլի», «Վեդի Ալկո», «Երևանի գարեջուր», «Ջերմուկ գրուպ», «Բջնի», «Զովք», «Աշտարակ կաթ» և բազմաթիվ այլ ընկերություններում:

Ագրովերամշակող արդյունաբերության զարգացմանը մեծապես նպաստել են Համաշխարհային բանկը և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD), որոնց միջոցներով և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության մարզերում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգի» շրջանակում տրամադրված շուրջ 8 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցների, միջազգային այլ կառույցների ու

[1] Ավետիսյան Ս. Ս., Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Երևան, 2010, էջ 71:

հիմնադրամների, ինչպես նաև սեփական ներդրումների շնորհիվ միայն վերջին 2 տարիներին ստեղծվել կամ վերազինվել են պահածոների, գինեգործության, պանրի, կաթնամթերքի ու մսամթերքի արտադրությամբ զբաղվող ավելի քան 170 փոքր և միջին ձեռնարկություններ:

Եթե մոտ 15 տարի առաջ աշխատում էին գյուղատնտեսական հումք վերամշակող 7 պահածոների, 12 գինեգործության և կաթի ու մսի վերամշակման մի քանի ընկերություններ, ապա այսօր ըստ գնահատականների՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 1600 սննդամթերքի արտադրության ձեռնարկություններ[1]:

2014 թվականի տվյալներով գյուղատնտեսության ոլորտին բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի 19,3%-ը, իսկ ագրովերամշակող արդյունաբերության հետ միասին՝ 26%-ը, և բացառիկ տեղ ունի երկրի բնակչության պարենային ապահովության գործում:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների 2010-2014 թվականների արտադրության ծավալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների 2010-2014 թթ. արտադրության ծավալները[2]

Արտադրատեսակներ	Չափի միավոր	Արտադրությունը ըստ տարիների				
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Միս՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը)	հազ.տոննա	54,6	61,1	65,9	72,3	81,3
Երշիկեղեն	տոննա	3187	3577	3717	4030	5240
Պանիր	հազ.տոննա	17,1	17,6	17,6	17,4	18,3
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)	մլն. լիտր	300	316	320	363	430
Պաղպաղակ	հազ. լիտր	3314	3481	3628	4265	6345
Հրուշակեղեն	տոննա	11751	13253	1496,5	16593	18243
Մակարոնեղեն	տոննա	2704	3274	3563	4094	4468
Բուսական յուղ	տոննա	1034	697	2656	4650	3968
Կենդանական յուղ	տոննա	951	779	584	547	1093
Պահածոներ՝ ընդամենը	տոննա	8029	11514	9681	10325	11729
այդ թվում՝ մսի	տոննա	462	285	749	892	145
ձկան և խեցգետնի	տոննա	51	1	54	90	348
բանջարեղենի	տոննա	4559	3985	3270	3005	4718
տոմատի	տոննա	1823	4959	2871	2842	3417
մրգի	տոննա	1134	2284	2737	3370	2582
Բնական հյութեր՝ ընդամենը	հազ. լիտր	11690	14591	16730	19547	21121
Կոնյակ, օղի	հազ. լիտր	24535,8	24568	28586,6	30222,6	28231,6
այդ թվում՝ օղի և օղու լիկյորի արտադրանք	հազ. լիտր	11923	9136	10104	9941	9504
կոնյակ	հազ. լիտր	12624,1	15381	18514,1	20383,3	18725,5
Գինի և շամպայն գինի	հազ. լիտր	6430,2	6814,6	6192,5	7216,7	6765,3
այդ թվում՝ գինի	հազ. լիտր	5812	6191,5	5718	6680,3	6130,9
շամպայն գինի	հազ. լիտր	618,2	623,1	478,8	536,4	634,4
Գարեջուր	հազ. լիտր	15353	14744	13668	19848	23717
Ոչ ալկոհոլային խմիչքներ	հազ. լիտր	38232	45725	45321	63400	80150
Հանքային ջուր	հազ. լիտր	30000	29668	33188	43215	56963
Շաքարավազ	տոննա	32508	72159	69267	69625	89189
Աղ (հանքանյութ)	հազ.տոննա	29,4	35,6	37,8	30,8	29,8

[1] www.minagro.am

[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2015, էջ 275-276:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ երևում է, որ 2014 թվականին 2010թվականի համեմատ բոլոր արտադրատեսակների գծով գրանցվել է աճ, բացի օղու և օղու լիկյորի արտադրանքի, կոնյակի և մսի պահածոյի:

Ագրովերամշակող արդյունաբերության կայուն զարգացման մասին է վկայում նաև այն փաստը, որ համակարգի ձեռնարկությունները սկսել են երկարաժամկետ պայմանագրեր կնքել գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների հետ, ինչը գյուղատնտեսական հումքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման և արտադրանքի ծավալների ավելացման կարևոր նախադրյալ է: Վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմացմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Հանրապետության վերամշակող արդյունաբերական ընկերությունների կողմից 2010-2014 թվականների մթերման ծավալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից 2010-2014 թվականների մթերման ծավալները[1]

Հ/Հ	Հումքի անվանումը	Մթերման ծավալները, տոննա				
		2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ
1.	**Պտուղ՝ ընդամենը**	**3626,5**	**14285,7**	**25620,0**	**28791,5**	**13875,8**
	այդ թվում՝ խնձոր	614,1	2735,7	4767,0	5187,8	3084,1
	դեղձ	193,3	1745,7	6163,4	1921,0	2917,0
	ծիրան	557,4	2830,6	8854,1	13038,6	710,0
	կեռաս, սալոր, բալ	881,3	1203,8	1454,9	2079,6	2776,9
	ընկույզ	254,0	339,1	213,0	232,7	165,0
	հատապտուղ	398,9	1093,0	752,0	1714,4	1145,3
	այլ պտուղ	727,5	4337,9	3416,0	4617,4	3077,5
2.	**Բանջարեղեն՝ ընդամենը**	**29681,8**	**50987,5**	**33645,8**	**27970,1**	**34076,9**
	այդ թվում՝ լոլիկ	24313,0	44209,0	26229,0	18970,0	23252,0
	վարունգ	1137,0	409,2	355,5	468,5	598,7
	սմբուկ	1865,0	2431,0	2021,0	2324,0	3477,4
	պղպեղ	784,0	1097,0	2313,0	2455,0	2801,0
	լոբի, ոլոռ	209,0	189,0	831,0	1612,0	1644,0
	այլ բանջարեղեն	1374,6	2651,6	1896,8	2140,6	2303,8
3.	**Խաղող՝ ընդամենը**	**134968,4**	**128927,4**	**156590,2**	**167184,7**	**184149,0**
	Ընդամենը	**168276,7**	**194200,6**	**215856,0**	**223946,3**	**232101,7**

Աղյուսակի տվյալներից ակնհայտ երևում է, որ մթերումների ընդհանուր ծավալը ավելացել է 72,5%-ով: Ընդ որում, բոլոր արտադրատեսակների մթերման ծավալները աճել են, բացի՝ ընկույզի, լոլիկի և վարունգի ծավալներից:

Հումքի մթերման 1կգ-ի միջին գները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը, մասնավորապես՝ լոլիկինը՝ 8,4%-ով, խաղողինը՝ 4,1%-ով, և կազմել են լոլիկինը ավելի քան 40, իսկ խաղողինը՝ 152,2 դրամ:

Հանրապետության արդյունաբերության ճյուղի մեջ գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը 2014թվականի տվյալներով կազմել է 38,4%, իսկ մշակող արդյունաբերությունում՝ 58,6%[2]:

Հարկ է նշել, որ Հայաստանի ընդհանուր արդյունաբերության արդյունքի շուրջ 35%-ը (ներառյալ ծխախոտի արտադրությունը) ապահովում է ագրովերամշակող արդյունաբերությունը: Այս ցուցանիշին հասնելը հնարավոր է դարձել խորհրդային կարգերի փլուզմանը հաջորդած տնտեսության ընդհանուր ճգնաժամից դուրս գալուն ուղղված հետևողական և բազմաձավալ

[1] www.minagro.am

[2] www.minagro.am

աշխատանքների ու միջոցառումների շնորհիվ, ինչպիսիք էին մասնավորեցումը, օրենսդրական դաշտի բարելավումը, շուկայական ենթակառույցների ստեղծումն ու մեծածավալ ներդրումները:

Հայաստանի ագրովերամշակող արդյունաբերությունը բավականին բազմազան է, ունի արտահանման միտվածություն և ընդգրկում է սննդարդյունաբերության գրեթե բոլոր ոլորտները, որոնցից առավել մեծ ծավալներ են կազմում խաղողի, պտուղ-բանջարեղենի, կաթի և ծխախոտի վերամշակման ճյուղերը: Միաժամանակ նշված ոլորտներում տեղակայված արտադրական հզորությունները այդ ոլորտների զարգացման և արտադրության ծավալների ավելացման մեծ պոտենցիալ են պարունակում, քանի որ այսօրվա դրությամբ օգտագործվում են առկա արտադրական հզորությունների մինչև 50%-ը:

Պետության տնտեսական անվտանգությունն ուղղակիորեն կապված է վճարային հաշվեկշռի հետ: Վճարային հաշվեկշռի հավասարակշռման նպատակով պետությունը կարող է որոշում ընդունել ներմուծումը ժամանակավորապես սահմանափակելու մասին: Պետությունը կարող է երկրի տնտեսական անվտանգությունն ապահովել նաև այն ապրանքների արտահանումը սահմանափակելու միջոցով, որոնց պահանջարկը մեծ է և որոնց նկատմամբ ներքին շուկայում գոյություն ունի պակասուրդ:

Վճարային հաշվեկշռի միջազգային փորձը վկայում է, որ առավել արդյունավետ է ընթացիկ հաշվի՝ առևտրային հաշվեկշռի պետական կարգավորումը: Մասնավորապես, արտահանման խթանում ապրանքների իրացման փուլում իրականացվում է հիմնականում ներազդելով գների վրա՝ արտահանողներին հարկային, վարկային արտոնություններ տրամադրելով և փոփոխելով արժութային փոխարժեքը:

Այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրության, արտահանման, ինքնաբավության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2012-2014 թվականներին (տե՛ս աղյուսակ 3-ը):

Խորհրդային տարիներին Հայաստանի սննդի վերամշակման արտադրանքը՝ կոնյակը, գինին, տոմատի մածուկը, պտուղ-բանջարեղենի պահածոները հիմնականում սպառվում էին Խորհրդային Միությունում: Ներկայումս ընդլայնվել է սպառման շուկաների աշխարհագրությունը: Այդ միտումը զարգացնելու համար լուրջ աշխատանքներ են կատարվում արտադրանքի որակի բարձրացման, ապրանքային տեսքի բարելավման, ստանդարտացման և սերտիֆիկացման ուղղությամբ: Այդուհանդերձ, սննդի վերամշակման կարողությունները չեն բավարարում գյուղատնտեսական հումքի արտադրության ներուժին, ուստի շահութաբեր այս ոլորտում ներդրումների ավելացումը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը կարևորագույն առաջնահերթություններ են:

Ագրովերամշակման ոլորտի կայուն զարգացումը շատ կարևոր է, քանի որ դրանից կախված զարգանում են նաև երկրի կարևորագույն ճյուղերից մեկի՝ գյուղատնտեսության մյուս հիմնական ճյուղերը՝ բուսաբուծությունն ու անասնաբուծությունը: Բավական է նշել, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում վերջին տարիների վիճակագրական տվյալներով կազմում է 19,3%, բնակչության 36,5%-ը ապրում է գյուղական բնակավայրերում, իսկ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները կազմում են ընդհանուր զբաղվածների շուրջ 34%-ը:

Ինչպես արդեն նշել ենք, ագրովերամշակող արդյունաբերության կազմակերպությունները սկսել են երկարաժամկետ պայմանագրային փոխհարաբերություններով աշխատել գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների հետ, ինչը աճեցրած գյուղ. հումքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման և արտադրության ծավալների ավելացման կայուն երաշխիք է տալիս նրանց:

Այսպիսով, վերամշակող կազմակերպությունների գործունեության առավել ակտիվացումը՝ ի հաշիվ օտարերկրյա ներդրումների, նորագույն տեխնոլոգիաների և արտահանման ծավալների ավելացումը կնպաստեն գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի լուծմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Աղյուսակ 3

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրությունը, արտահանումը, ներմուծումը, ինքնաբավության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2012-2014թթ.[1]

Արտադրատեսակը	Չափի միավորը	Տեղական արտադրություն			Արտահանում			Ներմուծում			Ինքնաբավության մակարդակը, %			Իրացման կառուց-վածքում տեղական արտադրության մասնաբաժինը, %		
		2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն	տոննա	4757	4943,8	5718,3	625,4	367	412,3	5344,9	5388	5942,7	50,2	49,6	50,8	43,6	45,9	47,2
Պանիր	տոննա	17658	17375,4	18317,3	903,6	1541,2	1542,4	1056,2	1243,7	1187,9	99,1	101,7	102,0	94,1	92,7	93,4
Պտուղբանջարեղենային պահածոներ	տոննա	8356,2	9989,6	11714,7	7242,2	7954,5	9600,3	6660,8	8174,9	8519,8	107,5	97,8	110,2	14,3	19,9	19,9
Հյութեր	հազ.լ	16741,6	19544,2	21106,2	2126,1	2013,2	2942,3	5685,3	4429,6	2992,2	82,5	89,0	99,8	72,0	79,8	85,9
Հրուշակեղեն	տոննա	14319,8	16543,6	18092,6	792,8	1118,7	1536,3	15403,2	16374,3	16764,8	49,5	52,0	54,3	46,8	48,5	49,7
Մակարոնեղեն	տոննա	3563	4093,1	4467,6	153,5	155,6	128,4	4315,4	4825,4	5337,6	46,1	46,7	46,2	44,1	44,9	44,8
Կոնյակ	հազ.լ	18514,1	20383,3	18725,5	17517,5	18188	18556	143,2	40,8	210,8	1624,3	911,6	4923,9	87,4	98,2	44,6
Գինի	հազ.լ	6192,5	7216,7	6765,3	1186,2	1398,5	2120,7	458,7	379,7	288,7	113,3	116,4	137,1	91,6	93,9	94,1
Գարեջուր	հազ.լ	13668,2	19847,8	23716,5	2795,4	2346,4	1987,8	2262,6	2731,1	2837,5	104,1	98,1	96,5	82,8	86,5	88,4
Բուսական յուղ	տոննա	2656,1	4650,3	3967,7	3,5	1,8	0,9	26964,1	26430,7	26204,8	9,0	15,0	13,2	9,0	15,0	13,1
Շաքարավազ	տոննա	69267	69625	89189	400	899,2	200	3829,9	4851,2	5643,8	95,3	94,6	94,2	94,7	93,4	94,0

[1] Պարենային ապահովություն և աղքատություն, 2015թ., հունվար-սեպտեմբեր, էջ 63-75:

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

ՍԱԹԵՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկեր ամբիոն
ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Ագրովերամշակող արդյունաբերությունը համարվելով երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը, շատ է կարևորվում գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման առումով: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2014թ. տվյալներով գյուղատնտեսության ոլորտին բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի 19,3%-ը, իսկ ագրովերամշակող արդյունաբերության հետ միասին՝ 26%-ը և բացառիկ տեղ ունի երկրի բնակչության պարենային ապահովության գործում: Այսպիսով, վերամշակող կազմակերպությունների գործունեության առավել ակտիվացումը՝ ի հաշիվ օտարերկրյա ներդրումների, նորագույն տեխնոլոգիաների, և արտահանման ծավալների ավելացումը կնպաստեն գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի լուծմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Բանալի բառեր. *արդյունավետություն, գյուղատնտեսություն, ագրովերամշակող կազմակերպություններ, հումք, վերամշակում, ներդրում, արտադրություն, արտահանում:*

АГРОПЕРЕРАБАТЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ КАК ДВИЖУЩАЯ СИЛА РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

САТЕНИК АРУТЮНОВНА МКРТЧЯН, *к.э.н., доцент*
Кафедра финансов и кредита Национального аграрного университета Армении
МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН, *к.э.н*
младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Агроперерабатывающая промышленность являясь одним из наиболее важных и эффективно работающих отраслей экономики страны, имеет большое значение для занятости и обеспечения доходами сельского населения. Исследования показывают, что, согласно данным 2014 г., на сельскохозяйственный сектор пришлось 19,3% ВВП страны, а вместе с агроперерабатывающей промышленностью - 26%, и отрасль занимает особое место в обеспечении продовольственной безопасности страны. Таким образом, активизация деятельности агроперерабатывающих компаний за счет иностранных инвестиций, новых технологий, а также увеличение объемов экспорта будут способствовать решению проблемы сбыта сельскохозяйственной продукции и повышению уровня товарности фермерских хозяйств.

Ключевые слова: *эффективность, сельское хозяйство, перерабатывающие компании, сырье, переработка, инвестиция, производство, экспорт.*

AGRI-PROCESSING INDUSTRY AS A DRIVING FORCE FOR THE AGRICULTURAL DEVELOPMENT

SATENIK HARUTYUN MKRTCHYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University
MERI GAGIK MANUCHARYAN, *Ph.D. in Economics*
Junior Research Associate. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Studies show that according to 2014 the agricultural sector accounted for 19.3% of the gross domestic product, while along with the agro reprocessing industry it account for 26%, hence it has a unique position in the food security of the population. Thus, the most activation of agro reprocessing companies due to the increase in foreign investments, new technologies, and increase in export will contribute to solving the problem of the sales of the agricultural products and increase the merchantability level of agricultural farms.

Keywords: *Effectiveness, agriculture, agro reprocessing companies, raw material, reprocess, investment, production, export.*